



Բիզնես Գործընկերոջ վարքագծի կանոնակարգ

Քաղաքականության սեփականատեր՝ Խմբի գնումների ղեկավար

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 31 հոկտեմբերի 2017թ.

Բիզնես գործընկերոջ վարքագծի սույն կանոնակարգը սահմանում է հիմնական պահանջները եւ պարտականությունները: VEON-ը իրավունք է վերապահում ողջամտորեն փոփոխելու պահանջները, եթե փոփոխությունները կապված են Կոմպլայենս ծրագրի հետ:

Մեր Բիզնես գործընկերները

Համաշխարհային տնտեսության՝ առավել փոխկապակցված դառնալուն զուգահեռ VEON-ը ձգտում է համաշխարհային կարգի մատակարարման այնպիսի շղթայի ստեղծմանը, որը լավագույնը կհամարվի իր դասում: Մենք գնահատում ենք փոխհամագործակցությունը այն վաճառողների, մատակարարների, գործակալների, կապալառուների, խորհրդատուների, միջնորդների, վերավաճառողների, դիստրիբյուտորների, կողմնակի ծառայությունների մատակարարների եւ Բիզնես գործընկերների (միասին՝ «Բիզնես գործընկերներ») հետ, որոնք տրամադրում են բարձր որակի, նորարարական պրոդուկտներ եւ ծառայություններ մրցունակ գներով, նվազեցնում են ռիսկը մեր բիզնեսի համար, ենթարկվում են բոլոր գործող օրենքներին, պահում են ամենաբարձր էթիկական չափանիշները, մեր հաճախորդների համար ապահովում են օգուտ եւ, որպես նվազագույն պահանջ, կատարում են VEON-ի Բիզնես գործընկերոջ վարքագծի կանոնակարգում սահմանված պահանջները («Կանոնակարգ»):¹

Կիրառում

Սույն Կանոնակարգը կիրառվում է Բիզնես գործընկերների եւ նրանց դուստր ընկերությունների, ենթակապալառուների եւ գործակալների հանդեպ, որոնք հանդես են գալիս որպես իրենց պրոդուկտների եւ ծառայությունների՝ VEON-ին եւ իր դուստր ընկերություններին լիցենզավորված/լիազորված վերավաճառողներ: Մենք պահանջում ենք, որ Բիզնես գործընկերները պահանջեն իրենց հաջորդ մակարդակի գործընկերներից ընդունել սույն Կանոնակարգի սկզբունքները:

Ընդհանուր սկզբունքներ

Կայուն գործելը, մարդու իրավունքների հանդեպ հարգանքը եւ էթիկայի վարվելակերպի եւ պրոֆեսիոնալ ազնվություն ամենաբարձր չափանիշներին համապատասխան աշխատանքը բարելավում են բիզնեսի երկարաժամկետ արդյունավետությունը: Մենք հավատարիմ ենք այդ սկզբունքներին եւ պահանջում ենք, որ Բիզնես գործընկերները կիսեն մեր հանձնառությունը եւ կատարեն սույն Կանոնագրքով սահմանված պարտավորությունները: Սույն Կանոնագիրքը

¹ Սույն փաստաթղթում Բիզնես գործընկերոջ վարքագծի կանոնակարգը կոչվում է Կանոնակարգ: VEON-ի Վարքագծի կանոնակարգը հանդիսանում է VEON-ի Վարքագծի կանոնակարգ, առանձին փաստաթուղթ, եւ հասանելի է VEON-ի համար www.veon.com կայքում:



մշակվել է հաշվի առնելով տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի լավագույն փորձը, այդ թվում՝ էլեկտրոնային արտադրության քաղաքացիական կոալիցիայի մասին Կանոնագիրքը, Համատեղ աուդիտի ոլորտում համագործակցության համար մատակարարման շղթայի կայուն զարգացման վերաբերյալ ուղեցույցը (Joint Audit Cooperation Supply Chain Sustainability Guidelines), ինչպես նաեւ էլակետային փաստաթղթերը, ինչպիսիք են՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաները եւ նորմատիվ իրավական պահանջները:

Էթիկական վարքագիծ

VEON-ը եւ մեր Բիզնես գործընկերները աշխատում են շատ հետաքրքրաշարժ եւ դինամիկ շուկաներում, մեծ հնարավորություններ առաջարկող վայրերում, սակայն նաեւ այնպիսի վայրերում, որոնք էթիկական եւ գործնական տեսանկյունից նշանակալի ռիսկեր են ներկայացնում: Այդ ռիսկերի կատարման ձեւը կայանում է բոլոր գործող օրենքների դրույթների կատարման մեջ, ներառյալ՝ Միացյալ Նահանգների հակակոռուպցիոն օրենքները, որտեղ VEON-ը գրանցված է Ֆոնդային դիլերների ազգային ասոցիացիայի (Nasdaq) եւ Նիդերլանդների ազգային ասոցիացիայի ավտոմատ գնանշման համակարգում, որտեղ գտնվում է VEON-ի գլխավոր գրասենյակը եւ որտեղ այն նաեւ գրանցված է: Ոչ մենք եւ ոչ էլ մեր Բիզնես գործընկերները չենք ձեռնարկի որեւէ գործողություն, ինչպես նաեւ չենք ընդունի որեւէ ռիսկեր, որոնց արդյունքում կարող ենք առնչվել ոչ-էթիկական արդյունքների կամ որոնք կհանգեցնեն գործող օրենսդրության խախտման:

Ազնիվ վարքագիծ

Մենք ընդունում ենք Ազնիվ վարքագծի բացառիկ արժեքը եւ այն, թե ինչպես է այն օգնում մեր բիզնեսին կարճաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում: Մրանք միայն խոսքեր չեն: Մրանք մեր արժեքներն են: Պարզ ասած՝ բարեխղճությունը եւ ազնվությունը նշանակություն ունեն: Անել այն, ինչ հարկավոր է, ցանկացած պարագայում, միշտ կարելու է: Մենք կաշխատենք մեր Բիզնես գործընկերների հետ շարունակաբար կատարելագործել առեւտրային արդյունավետությունը եւ արտադրողականությունը սույն Կանոնակարգի գործողության ոլորտներում:

Համաշխարհային առաջնորդ

VEON-ը սկսել է թվային տնտեսության մեջ համաշխարհային առաջնորդ դառնալու ուղին, եւ մենք հասնելու ենք դրան ճիշտ ճանապարհով: Ազնվությունը մեր մշակույթի անկյունաքարն է: Որպես առաջնորդ ճանաչումը, որը հավատարիմ է արժեքներին եւ ազնվությանը, VEON- ի հեղինակությունը ձեւավորելու հիմնական շարժիչ ուժն է եւ մեր հաջողության հիմքում է: Բիզնես գործընկերոջ վարքագիծը ազդում է VEON- ի հեղինակության վրա: Այն Բիզնես գործընկերը, որը չի համապատասխանում սույն Կանոնագրքի չափանիշներին, դրականորեն չի դիտարկվի VEON-ի կողմից հետագա աշխատանքի տրամադրման ժամանակ, եւ դա կարող է հանգեցնել որոշ կամ բոլոր գործնական հարաբերությունների դադարեցմանը:

Եվս մեկ քայլ առաջ

Սույն Կանոնակարգում նկարագրված կոնկրետ պահանջները իրենցից ներկայացնում են Բիզնես գործընկերների համար նվազագույն չափանիշներ: Մենք կոչ ենք անում Բիզնես գործընկերներին դուրս գալ այդ չափանիշների շրջանակներից, հատկապես այն դեպքերում, երբ տեղական օրենքներն ու կանոնները կամ թույլ են, կամ հազվադեպ են կիրառվում:



Համալիր ստուգման գործընթաց

VEON-ը, Բիզնես գործընկերներ ընտրելիս, անց է կացնում պատշաճ, ռիսկի գնահատման վրա հիմնված համալիր ստուգում: Բոլոր Բիզնես գործընկերները մինչև համագործակցություն սկսելը պետք է անցնեն եւ բարեհաջող ավարտեն հակակոռուպցիոն կանոնների պահպանման մասով համալիր ստուգում: Բիզնես գործընկերները պետք է համագործակցեն VEON-ի համալիր ստուգման գործընթացում եւ հստակ կերպով լրացնեն բոլոր հարցաթերթիկները, այդ թվում՝ ժամանակին տրամադրեն ընկերության սեփականության եւ աֆիլիացված անձանց վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը եւ թափանցիկ տեղեկատվություն:

Տեղական օրենսդրության եւ կանոնների պահպանում

Բիզնես գործընկերները պետք է պահպանեն բոլոր համապատասխան օրենքները, կանոնները եւ չափանիշները այն երկրներում, որտեղ գործում են: Եթե գործող օրենքները եւ Կանոնակարգը միեւնույն առարկային են վերաբերում եւ միմյանց չեն հակասում, պետք է կիրառվի ամենաբարձր չափանիշը: Եթե սույն Կանոնակարգի որեւէ պահանջ հակասում է գործող օրենսդրության դրույթներին, ապա պետք է կիրառվեն այն ամենաբարձր չափանիշները, որոնք համապատասխանում են գործող տեղական օրենսդրության դրույթներին:

Կաշառակերություն եւ կոռուպցիա

Միանշանակ հայտարարվում է՝ VEON-ը թույլ չի տա որեւէ տեսակի կոռուպցիա կամ կաշառակերություն:

VEON-ը խստիվ արգելում է կոռուպցիան, կաշառակերությունը, յուրացումը, խարդախությունը, գողությունը, շորթումը եւ հափշտակումը: Բիզնես գործընկերները պետք է պետք է ենթարկվեն բոլոր գործող հակակոռուպցիոն օրենքներին եւ վարեն ճշգրիտ հաշվապահական գրքեր եւ գրառումներ, որոնք ճիշտ են արտացոլում իրենց գործարքները եւ չեն պարունակում կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություններ: Բիզնես գործընկերները չպետք է տան, առաջարկեն տալ, խնդրեն կամ համաձայնվեն ընդունել գումար կամ որեւէ արժեքավոր բան որեւէ մեկից, ուղղակիորեն կամ անուղղակի կերպով որեւէ այլ կողմի միջոցով՝ VEON-ի հետ կապված ոչ պատշաճ առավելություն ստանալու համար:

Բիզնես գործընկերները պետք է իրականացնեն հակակոռուպցիոն օրենքների համապատասխանության իրենց սեփական ծրագիրը՝ կանխելու եւ կանխարգելելու անօրինական գործողությունները կամ օրենքի հնարավոր խախտումները:

Նվերներ եւ հյուրընկալություն

Ավելին՝ Բիզնես գործընկերները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակի կերպով առաջարկեն նվերներ, հյուրընկալություն ցուցաբերեն կամ այլ շահեր առաջարկեն VEON-ի աշխատողներին կամ ներկայացուցիչներին նրանց վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով, ինչպես նաեւ չպետք է VEON-ի աշխատողներին առաջարկեն որեւէ նվերներ կամ հյուրընկալություն ցուցաբերեն, անկախ գումարի չափից, պայմանագրի հետ կապված բանակցությունների, աճուրդի, տենդերների, կամ պարզեւատրման ժամանակ:



Գաղտնիություն եւ տվյալների անվտանգություն

Բիզնես գործընկերները պետք է պահպանեն VEON-ի հաճախորդներին, բիզնես գործունեությանը, պայմանագրերին, նախագծերին, ֆինանսական դրությանը կամ արտադրողականությանը վերաբերող ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը, եթե դրա բացահայտման վերաբերյալ հատուկ գրավոր թույլտվություն VEON-ից չի ստացվել: Բիզնես գործընկերները պետք է պաշտպանեն այն անհատների անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիքները, որոնց հետ բիզնես են վարում: Բիզնես գործընկերները անհատական տվյալների հավաքագրման, մշակման եւ փոխանցման ժամանակ պետք է կատարեն գաղտնիությանը եւ տեղեկատվության անվտանգությանը վերաբերող օրենքների պահանջները եւ նորմատիվ պահանջները: Բիզնես գործընկերները պետք է ապահովեն հաճախորդներին վերաբերող տվյալների անվտանգությունը, եւ այն, որ հաճախորդների անձնական կյանքի անձեռնմխելիությունը չխախտվի: Բիզնես գործընկերները պետք է ունենան տվյալների պաշտպանության պատշաճ մեթոդներ եւ ապահովեն իրենց տվյալների պաշտպանության համակարգերի անվտանգությունը, ինչպես նաեւ պատշաճ կերպով վերահսկեն այն աշխատողներին, որոնք աշխատում են VEON-ի եւ հաճախորդների տվյալների հետ:

Հակամրցակցային վարքագիծ

Բիզնես գործընկերները չպետք է խախտեն կամ մաս հանդիսանան մրցակցության պաշտպանության կամ հակամենաշնորհային օրենսդրության որեւէ խախտման: Բիզնես գործընկերները պետք է ազնիվ բիզնես վարեն, համապատասխանեն գովազդի եւ մրցակցության ոլորտի չափանիշներին:

Շահերի բախում

Բիզնես գործընկերները պետք է տեղեկացնեն VEON-ին բոլոր փաստացի, պոտենցիալ կամ ենթադրյալ շահերի բախման մասին, որոնք կարող են վերաբերել VEON-ին: «Շահերի բախում» նշանակում է ցանկացած հանգամանք, փաստացի, պոտենցիալ կամ ենթադրյալ, որը կարող է հանգեցնել նրան, որ որեւէ կողմ իր ֆինանսական կամ անձնական շահերը ավելի բարձր կդասի այն շահերից, որոնք կապված են իր պարտականությունների հետ, կամ կարող է հանգեցնել այդ կողմի կողմնակալությանը իր բիզնես դատողություններում, որոշումներում եւ գործողություններում: Բիզնես գործընկերները պետք է խուսափեն շահերի բախման բոլոր դեպքերից, որոնք կարող են ոչ բարենպաստ ազդեցություն ունենալ գործնական հարաբերությունների վրա:

Մտավոր սեփականություն

Բիզնես գործընկերները պետք է հարգեն մտավոր սեփականության իրավունքները: Բիզնես գործընկերները պետք է տեխնոլոգիաները այնպես փոխանցեն, որպեսզի մտավոր սեփականության իրավունքները պաշտպանված լինեն:

Փողերի լվացում

Բիզնես գործընկերները պետք է խստիվ հակազդեն փողերի լվացման բոլոր ձեւերին եւ քայլեր ձեռնարկեն թույլ չտալու, որ իրենց ֆինանսական գործարքները օգտագործվեն այլ անձանց կողմից փողերի լվացման նպատակով:



Բանավոր պայմանագրերի արգելք

VEON-ը արգելում է Բիզնես գործընկերների հետ բանավոր պայմանագրերը: VEON-ին տրամադրվող ծառայությունների կամ պրոդուկտների բոլոր պայմանները պետք համաձայնեցվեն աշխատանքը սկսելուց առաջ եւ գրավոր ձեւակերպվեն:

Միջազգային առևտուր եւ տնտեսական պատժամիջոցներ

Բիզնես գործընկերները պետք է համապատասխանեն միջազգային առևտրի (ներառյալ ներմուծման եւ արտահանման/ վերաարտահանման վերահսկողությունը) եւ տնտեսական պատժամիջոցներին վերաբերող գործող օրենքներին եւ կանոններին: Բիզնես գործընկերները չպետք է վարեն Բիզնես որեւէ կողմերի հետ կամ իրավասության դաշտում, եթե գործող օրենքները կամ կանոնները արգելում են գործունեությունը:

Մարդու իրավունքներ

Բիզնես գործընկերները պետք է հարգեն եւ խրախուսեն մարդու համընդհանուր իրավունքները, ինչպես նշված է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ: Բիզնես գործընկերները պետք է խուսափեն մարդու իրավունքների ցանկացած խախտումների մասնակցելուց եւ պետք է միջոց հարգեն յուրաքանչյուր անձի անձնական արժանապատվությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը եւ իրավունքները: Բիզնես գործընկերները չպետք է հանդուրժեն աշխատողների նկատմամբ անընդունելի վերաբերմունք, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հոգեկան դաժանություն, ֆիզիկական բռնություն, հաշմանդամների հանդեպ դաժան վերաբերմունք, ստրկություն եւ սեռական ոտնձգություն:

Հարկադիր աշխատանք

Բիզնես գործընկերները չպետք է կիրառեն հարկադիր աշխատանքի, պարտատիրական ստրկության, կամ հարկադիր կամ պարտադրված աշխատանքի որեւէ ձև: Բիզնես գործընկերները իրավունք չունեն աշխատողներից որպես աշխատանքի պայման պահանջել հրաժարվել կառավարության կողմից տրված ցանկացած անձը հաստատող փաստաթղթերից, անձնագրերից կամ աշխատանքի թույլտվություններից: Բիզնես գործընկերները պետք է ապահովեն այն, որ աշխատողների եւ Բիզնես գործընկերների միջև լինեն կամավոր աշխատանքային հարաբերություններ՝ ազատ սպառնալիքներից, ահաբեկումից կամ հարկադրանքից:

Մանկական աշխատանք

Բիզնես գործընկերները չպետք է օգտվեն մանկական աշխատանքից: Այն դեպքում, երբ գործող օրենսդրությունը չի սահմանում աշխատանքի համար իրավաբանական նվազագույն տարիք, «Երեխա» նշանակում է 15 տարին չըրացած ցանկացած անձ: Աշխատանքի այս նվազագույն տարիքը սահմանվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մի քանի կոնվենցիաներում:

Բաց եւ ազնիվ փոխհամագործակցություն

Բիզնես գործընկերները պետք է ապահովեն ուղղակի եւ ազնիվ հարաբերություններ աշխատողների եւ ղեկավարության միջև, որոնք ազատ են պատժի, ճնշման, ահաբեկման կամ հետապնդման վախից եւ, որքանով թույլ է տալիս օրենքը, ճանաչեն աշխատողների ազատ



ասոցիացիայի իրավունքը:

Խտրականության արգելք

Բիզնես գործընկերները իրավունք չունեն դիմել աշխատողների նկատմամբ հետապնդման եւ անօրինական խտրականության: Բիզնես գործընկերները պետք է աշխատանքի ընդունման եւ աշխատանքային այնպիսի գործընթացների ընթացքում, ինչպիսիք են առաջխաղացումը, պարգևատրումը, դասընթացներին մասնակցելու իրավունքը, բացառեն որեւէ՝ օրենքով պաշտպանված դասերի նկատմամբ կամ տարիքային, ռասայական, մաշկի գույնի, էթնիկական պատկանելության, ծագման, ազգային ծագման, սեռի, գենդերային ինքնության կամ արտահայտման, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, հղիության, առողջական վիճակի, կրոնի, սոցիալական ծագման կամ կարգավիճակի, քաղաքական համոզմունքների, արհմիության անդամակցության կամ ընտանեկան կարգավիճակի, կամ վետերանի կարգավիճակի հետ կապված խտրականությունը:

Աշխատանքի պայմաններ

Բիզնես գործընկերների աշխատողները պետք է ունենան աշխատանքային պայմանագիր, որը սահմանում է աշխատանքային պայմանները: Համաձայն տեղական օրենսդրության պահանջների՝ պայմանագիրը, առնվազն, պետք է ապահովի արդար վարձատրություն՝ ազգային օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխան, եւ պետք է համապատասխանի գործող օրենսդրությամբ սահմանված աշխատանքային ժամերի առավելագույն քանակին: Բացի այդ, աշխատողներին պետք է հարգանքով եւ արժանապատվորեն վերաբերվեն: Ֆիզիկական, հոգեբանական կամ բանավոր վիրավորանքները, ճնշումները, սպառնալիքները կամ ահաբեկման այլ ձևերը խստիվ արգելվում են:

Աշխատանքի անվտանգություն եւ առողջության պահպանում

Միջազգային ստանդարտներին եւ տեղական օրենսդրությանը եւ կանոններին համապատասխան՝ Բիզնես գործընկերները պետք է ապահովեն առողջ եւ անվտանգ աշխատանքային միջավայր: Աշխատանքի անվտանգության եւ առողջության պահպանման պարտավորությունները կկիրառվեն կողմերի, այդ թվում՝ Բիզնես գործընկերոջ տարածքներում աշխատող աշխատողների եւ կապալառուների նկատմամբ Բիզնես գործընկերոջ վերահսկողության ներքո: Հարկավոր է տեղեկացնել VEON-ի տարածքում կամ նրա գործունեության հետ կապված աշխատանքի ընթացքում տեղի ունեցած բոլոր մահվան դեպքերի եւ այն իրադարձությունների մասին, որոնք հանգեցրել են լուրջ վնասվածքների:

Արտակարգ իրավիճակներին և պատահարներին պատրաստվածություն

Բիզնես գործընկերները պետք է ունենան՝ դժբախտ պատարաններին, առողջության հետ խնդիրներին եւ կանխատեսելի արտակարգ իրավիճակներին նախապատրաստելու եւ դրանց արձագանքելու համակարգեր եւ ուսուցում: Բիզնես գործընկերները նաեւ պետք է գրանցեն, հետաքննեն եւ օգտագործեն ձեռք բերված փորձը:

Մանիտարական պայմաններ

Բիզնես գործընկերները պետք է ապահովեն այնպիսի պայմաններ եւ հարմարություններ, այդ թվում անհրաժեշտության դեպքում աշխատողների բնակեցումը, որոնք պետք է լինեն հիգիենիկ, անվտանգ եւ պետք է բավարարեն աշխատողների հիմնական պահանջները:



Շրջակա միջավայրի պաշտպանություն և աղտոտման կանխարգելում

Բիզնես գործընկերները պետք է աշխատեն շրջակա միջավայրի պաշտպանության գործող չափանիշներին համապատասխան և պետք է համապատասխանեն շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող գործող օրենքներին՝ պատասխանատու աշխատանք ապահովելու համար: Այն երկրներում, որտեղ օրենսդրությունը ավելի քիչ զարգացած է կամ չի կիրառվում, Բիզնես գործընկերները պետք է ձգտեն նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի աղտոտումը: Հարկավոր է խրախուսել պրոդուկտների և ծառայությունների բնագավառում նորարարական մշակումները, որոնք տրամադրում են էկոլոգիական և սոցիալական արտոնություններ, և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կիրառումը: Բիզնես գործընկերները պետք է աշխատեն ուղղել ցանկացած գործունեություն, որը բացասաբար է անդրադառնում մարդու կյանքի, վայրի բնության և շրջակա միջավայրի վրա:

Պատասխանատու մոտեցում նյութերի մատակարարման հարցում

Բիզնես գործընկերները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի իրենց պրոդուկտներում չօգտագործվի այնպիսի հումք, որը ուղղակիորեն կամ անուղղակի կերպով ֆինանսավորվում է այնպիսի զինված խմբերի կողմից, որոնք թույլ են տալիս մարդու իրավունքների խախտումներ:

Հստակ և լիարժեք գրառումներ

Բիզնես գործընկերները չպետք է կեղծեն գրառումները կամ խեղաթյուրեն պայմանները կամ աշխատանքը:

Սույն Կանոնագրքի կատարման ծրագիր

Բիզնես գործընկերները պետք է ձգտեն ունենալ սույն Կանոնագրքի թեմաների հետ կապված ծրագիր կամ համակարգ, եթե դրանք դեռ գոյություն չունեն համապատասխան Բիզնես գործընկերոջ ներկա կառուցվածքում: Նման ծրագիրն ու համակարգը պետք է մշակված լինեն՝ ապահովելու սույն Կանոնագրքի դրույթների կատարումը: Դրա նպատակը պետք է լինի սույն Կանոնագրքի հետ կապված գործառնական ռիսկերի նվազեցումը: Հիմնական սկզբունքն է՝ նպաստել շարունակական բարելավմանը:

Տեղեկատվության տրամադրում

Բիզնես գործընկերները պարտավոր են անհապաղ տեղեկացնել սույն Կանոնագրքի ցանկացած ենթադրյալ կամ հայտնի դարձած խախտումների մասին: Եթե սույն Կանոնագրքի վերաբերյալ հարցեր ունեք կամ կարծում եք, թե որեւէ անձ խախտել է դրա դրույթները, դիմեք VEON-ի Կոմպլայենսի բաժին compliance@veon.com էլ.հասցեով: Կամ կարող եք հարց բարձրացնել կամ տեղեկացնել խնդրի մասին www.veon.com/speakup կայքում: Բոլոր հաշվետվությունները պատշաճ կերպով դիտարկվում են և, անհրաժեշտության դեպքում՝ հետաքննվում: VEON-ը թույլ չի տա ճնշում գործադրել որևէ անձի նկատմամբ, ով փորձում է ճիշտ քայլեր ձեռնարկել՝ հայտնելով խնդրի մասին: Այն մարդը, ով բարեխղճորեն տեղեկացնում է պոտենցիալ զանցանքի մասին, որի հանդեպ ճնշում է գործադրվում կամ այլ ոչ բարենպաստ գործողություններ են ձեռնարկվում խնդրի մասին տեղեկացնելու պատճառով, պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին վերը նշված կապի միջոցներով:



Կորպորատիվ պատասխանատվության մասին ամենամյա հաշվետվություն

VEON-ը իրավունք է վերապահում հրապարակել սույն Կանոնակարգի կատարման մասին տեղեկատվությունը իր Կորպորատիվ պատասխանատվության մասին ամենամյա հաշվետվության մեջ: Հաշվետվությունը չի մատնանշի առանձին Բիզնես գործընկերների, եւ բոլոր օրինակները կներկայացվեն անանուն կերպով, այնպես, որ Բիզնես գործընկերների նույնականացումը բացառված կլինի, բացառությամբ նախապես համաձայնեցված դեպքերի: